կոչի Զանկեան, և ունէի գիւղ արտաքոյ քաղաքին և շատ մուլք, նոյնպէս և ի քաղաքն և չինեցի մի-բրա մի բարձր յոյժ, և ի վճարման գործոյն արարի կոչումն մեծ ժողովոյ եւ արարի խրախութիւնս, եւ նախ քան զհացկերոյթն հանին զիս ի մնարայն, տալ զառաջին ժամն մեր, և մինչ գնացի և շրջէի ի մնա-բայն ի գլուխն, և հայեցայ ի կողմ արևելից, և տե-սի բացեալ զերկինս և իջանէր թագաւոր մի անճառե-լի կերպիւ և անհուն զաւրաւք հրեշտակաւք, և եկեալ ի զաւրացն հանդէպ իմ կազմեցին աթոռ ի վերայ աւ-դոյն, եւ եկեալ թագաւորն նստաւ, եւ հնչէին փող յամենայն կողմանց, և սկսան գալ ազգ ամենայն քը-ըիստոնէից առաջնորդաւն իւրեանց և երկրպագանէին նմա, եւ թագաւորն ընդունէր զամենեսեան գլխովն, և անցեալ նստէին ամենեքեան: Ապա գայր ազգ մի աւտար պայծառ լուսով և փառաւորեալ զարմանալի առաջնորդաւ, և յարեաւ թագաւորն յաթոռոյն և զը-նաց ընդ առաջ նորա, և գիրկս արկեալ համբուրեաց զնա, և սկսաւ գովել եւ գոհանալ զնմանէ ասելով. իմ քաջ նահատակ, իմ զուարթ և քաջ ժիր մշակ, իմ մեծ և յաղթող սպառազէն, և տարաւ նստոյց զնա առ ինքն, և զազգն նորա համբուրեաց և ողջագու-ըէր, և եկն ոմն առ իս և տեղեակ առնէր զիս, և ես այսպէս սպառեալ և հիացեալ կայի: Իսկ որ ի վայրն կային զարմացեալ, կային ընդ յամենն իմ, և առա-քեցին առ իս զաւագ որդիս իմ, և սա եկեալ զնոյն տեսեալ և յիմարեալ եկաց, և նոքա այլ նեղասըր-տեալ առաքեցին զկրտսեր որդիս ստիպել զմեզ գնալ առ նոսա, և յորժամ եկն տղայս, նա էանց տեսիլն, սակայն մեք պատմեցաք սմա զտեսիլն, և ասացին ցիս որդիքս իմ. Զի՞նչ կամիս առնել, և ես ասացի. ձայ-